

րէժինդրութեան ապացոյց մը. և այդ էր պատճառը որ այն ատեն այս տեղւոյն վրայ եկեղեցի չկար:

Ս. Պետրոսի եկեղեցին շինուած էր արդէն Զ. դարու առաջին քառորդին, ինչպէս յիշեցինք արդէն, Աւագ Հինգշաբթիի թափօրի ժամանակ հոն կը կարդացուէր Մասք.ի ԻԶ. 57-Իէ., 2, որ կը պատմէ Կայրափայի տան մէջ Յիսուսի տրուած նախատանաց տեսարանը: Յիշատակարանները հեռւեալ կերպով կը հրահանգեն թափօրին գնացքը. «Յետոյ քաիօրը կ'երթայ Սիոնի մայր եկեղեցին ուր կը գտնուի այն սիւնը որուն վրայ ձաղեցին մեր Տէրը...: Հոնկէ թափօրը կ'երթայ Կայրափայի տունը ուր Պետրոս ուրացաւ Տէրը. հոն կը գտնուի Ս. Պետրոսի եկեղեցին: Միւսնոյն թուականին աւագ սարկաւազ Թէոդոսիոս իր Ուղեգրութեան մէջ կը պատմէ. «Այն սիւնը որ Կայրափայի տան մէջ էր՝ այժմ կը գտնուի Ս. Սիոնի մէջ: Մինչ Տէրը կը ձաղէին և սիւնը գրկած էր, իր բազուկները, ձեռքերը և մատները անոր մէջ կը մտնէին իբր կակուղ մոմի մէջ . . .»: Ս. Սիոնէն՝ Կայրափայի տունը, որ է այժմ Ս. Պետրոսի եկեղեցի, յիսուն քայլ է: Թէոդոսիոսի պայմանագրական քայլը 5-6 մէր է. կը հետեի ուրեմն որ սոյն հեղինակը Կայրափայի տունը 250 մէրը հետի կը գնէ Վերնատունէն, ինչ որ կատարելապէս ճիշդ է: Այս եկեղեցին Պարսից արշաւանաց ժամանակ կանգուն էր, վասն զի Ս. Տեղեաց ծիսարանին վրացական թարգմանութեան վկայութեան համաձայն, ան Սոփրոնիոսի ժամանակն ալ Աւագ Հինգշաբթիի հանդիսական թափօրի ընթացքին նոր կայանի մը տեղն էր: Հոն բարեպաշտ հաւատացեալները կը յիշէին Փրկչին վերջին զիշերուան բոլոր դէպքերը, հարցաքննութիւնը, սուս վկայութիւնները, Կայրափայի երգմանցումը և Յիսուսի պատասխանը հաստատելով թէ՛ ինքն է «Յիսուսը, Ասուծոյ Որդին», քահանայապետին բարկութիւնը և Փրկչին ի մահ դատապարտուիլը, Պետրոսի երեք անգամ ուրացումը գաւթին մէջ, Սենտրիոնի անգամոց և ծառաներու անարգանքը, Պետրոսի զղջալը հաւախօսի ատեն, երբ Փրկիչը իրեն կը նայէր: Իւրաքանչիւր ոք իր յատուկ զղջումը կը յայտնէր հոն աղօթելով «ի ծուներ»:

Սաշակիրաց թուականէն սկսեալ Աւագ Հինգշաբթիի հանդիսական թափօրը կը կորսնցնէ իր կանոնաւորութիւնը և նոր փոփոխութիւններ մտնելով ընդունուած կանոնը կը խանգարուի: